Արձանագրություն N 3

ՀԾԿՀ-19/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով էլեկտրոնային աճուրդի միջոցով համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սարյան 22

05 դեկտեմբերի 2018թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արսեն Թերզիկյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը:

Օրակարգ

ՀԾԿՀ-19/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին

ՀԾԿՀ-19/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց տվյալ աճուրդի համար 2018 թվականի դեկտեմբերի 04-ին ստացված պարզաբանման բովանդակությունը, այն է.

1. «Հարգելի գործընկեր, խնդրում ենք տալ պաշտոնական պարզաբանում 5-րդ չափաբաժնով նախատեսված Lexmark MX-410de տպիչի համար նախատեսված քարթրիջների չափերի վերաբերյալ, ներկա պահին քարթրիջի չափերը կազմում են 181 x 399 x 137 մմ՝ստորև օֆիցիալ կայքի հղումը: Արդյոք Ձեր համար ընդունելի կլինի նշված չափերով քարթրիջի մատակարարումը, որը նույնպես օրիգինալն է, ինչպես նաև համարժեք քարթրիջի մատակարարումը, որի տեխնիկական պարամետրերը համապատասխան են օրիգինալի տեխնիկական չափանիշներին, սակայն փաթեթավորման չափերը հնարավոր է չնչին տարբերվեն օրիգինալից: https://www.lexmark.com/en_be/supply/7653/602-2-5K-Return-Program-Toner-Cartridge (սեղմել Specs կոճակը)»:

Հանձնաժողովը ուսումնասիրեց և որոշեց տալ հետևյալ պատասխանները.

1. «Ցանկացած օրիգինալ կամ օրիգինալին համարժեք ապրանքի մատակարարումը, որի պարամետրերը համապատասխանում են պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրով սահմանված չափանիշներին, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է ընդունելի լինեն: Ինչ վերաբերում է փաթեթավորման չափերի չնչին տարբերությանը, ապա այն չպետք է հանգեցնի քարթրիջի աշխատանքային ռեսուրսի, այն է՝ 2500 էջ տպաքանակի նվազեցմանը»:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լիլիթ Մկրտչյան

անդամներ _____ Ջուլիետա Բաբայան

_____ Արսեն Թերզիկյան

քարտուղար _____ Էդգար Շադյան